

ԳԵՂԱՐՈՒԵՍ	
ՃԱՐՏ. Ս. ՃԵՂԱԶԻՐԵԱՆ. — Գժրէթ Թէ Լուսա. մուս	149
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ	
Հ. ՍԱՀԱԳ ԵՒՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ. — Քննական պատմութիւն Բագրատունեաց անկումէն մինչեւ մեր օրերը	158
Հ. Ա. ՅՈՎՈՒՆԱՆ. — Աղետիւր Կոմսին զարմանալի կեանքը (Թրգմ. Հունգարերէնէ)	169
ԳՐԱԿԱՆ	
ԱՐՈՒՆ-ԵՐԿԱԹ. — Ծարաւ	157
Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ. — Կանանց տերեւը - Հե. բուս - Խաչուած սէրը - Գանձը - Աւելանին և ես - Այսօր - Մահուան հետ	163 - 166
ՀՐԱՋ ՔԱԶԱՐԵԱՆ. — Փարոսը - Գաղափարի մը համար	167
ՅԱԿՈՐ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ. — Մանկութիւն, Պատանեկութիւն ու Սէր - Աշտանային - Երգի մը պէս ինկաւէտ - Երազ տեսայ երէկ գիշեր	168
ԱԼԻՇԱՆ. — Վասակ Աղազ (Թրգմ. Հ. Վ. Հանն Յովհաննէսեանի)	186
ԱՐՄԱՆԻՐԵԱՆ. — Թափօրը	188
Յ. ՔԻՐՏԵԱՆ. — Աշուղ Բուսայ Օղլի Ղազի Խան	175
ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ	
R. W. Emerson. — Ամերիկեան տեսութիւն տնդ-լիական սովորոյթներու վրայ	174
Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ. — «Երախտագիտական տուրք»ի մը մէջ յարգանքի թերին	179
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ. — Աղաղակիւս Աճառեանի մօտ (արտասու. «Սովետական Հայաստան»էն)	183
ԽՈՐԷ. — Համալսարանական նոր վկայաւ մը Ս.Ո. Վարդապետի Հ. Սաներէն	178
(Շար. տես. Գ. Էջ)	

BEAUX-ARTS	
S. Djévahir. — Coupole ou lucarne?	149
HISTOIRE	
P. Sahag Der-Movsessian. — Histoire cri- tique depuis la décadence de la dy- nastie des Pakratides jusqu'aux nos jours	158
P. A. Foyolian. — La vie merveilleuse du Comte Abédik (trad. de l'hongrois)	169
LITTÉRATURE	
Arsène-Yergat. — La soif (poésie)	157
P. V. Hovhannessian. — La feuille verte - Le pardon - L'amour crucifié - Le Crâne - Alishan et moi - Aujourd'hui - Avec la mort (poésies)	163 - 166
Hratch Katcharentz. — Le phare - Pour un ideal	167
Hagop Kouyoumdjian. — Enfance, Adole- scence et Amour - Automnal - Comme un chant fervent - J'ai rêvé hier nuit (poésies)	168
Alishan. -- Le noble chevalier Vassagh (poé- sie; trad. de l'arm. classique par le Rév. Père V. Hovhannessian)	186
Arnavirian. — La procession	183
H. Kurdian. — Le poète populaire Budagh Oghli Ghazi Khan	175
DIVERS	
R. W. Emerson. — Une opinion américaine sur les coutumes anglaises	174
P. L. Dayan. — Le manque de respect dans un «acte de reconnaissance»	179
K. Stéphanian. — Chez l'académicien Adja- rian	183
Réd. — Un de nos anciens élève, diplômé universitaire	178
Voir suite page 3)	



ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԳՄԲԷԹ ԹԷ ԼՈՒՍԱՄՈՒՏ

Մեր մատենագիրներէն սկսած, մինչեւ այսօրուան մեր բանասէրները, ամէն անգամ որ առիթը կը ներկայանայ խօսելու հայ ճարտարապետութեան մասին, անայլալ կը գործածեն «Գմբէթ» բառը՝ հայ շէնքերու վրայ գտնուած շինութեան ակնարկելով: «Գմբէթարդ» կը գրէ հայ մատենագիրը եւ նոյնը կը կրկնէ այժմու բանասէրը: Եւ որովհետեւ՝ ցարդ հայկական ճարտարապետութիւնը ուսումնասիրուած է՝ մասնաւորաբար բանասիրական գետնի վրայ, այս ճարտարապետական «սխալ»ը տեսակ մը նուիրագործում ստացած է:

Գմբէթի գաղափարը, հայ ճարտարապետութեան մէջ, մեր մատենագիրներն են որ մտցուցած են, առանց սակայն ճարտարապետական ո՛ր եւ է հիմքի, նման ասութիւն մը արդարացնող:

Մեր մատենագիրները, ըլլալով յաճախ այս կամ այն իշխանին եւ կամ նախա-ԲԱԶՄԱՎԵՊ

բարական տան ժամանակագիրը, իրենց գրուածքներուն մէջ, իշխանը եւ կամ մեծատունը փառաւորելու առիթները չկործանեցին զատ, ջանացած են նոյնիսկ անոր իւրաքանչիւր գործը խոշորացոյցով մեզ ներկայացնելու: Այսպէս՝ օրինակի համար՝ Թովմա Արծրունին: Ան երբ կը նկարագրէ իր ազգականին՝ Վասպուրականի թագաւոր Գագիկ Արծրունիի, Աղթամարի մէջ կառուցած տաճարը, ա՛լ բառ չի գտներ այդ շինուածքը նկարագրելու եւ ներբողելու: «...Շատ զարմանալի էր՝ հիմէն մինչեւ վեր՝ տաճարին առանց սիւնի բարձրանալը: Կամարակից խորաններ, անկիւններ եւ գեղապաճոյճ շրջապատներ ունի, որոնց հաշիւը ոչ կարելի է գտնել եւ ոչ ալ նայելով վերջը բերել»:

«...Լուսաճաճանչ ոսկեզարդ, երկնահարթ գմբէթ մը ունի (տաճարը), որուն նայելու համար, թագաւորին պատիւ

տալու նման, նախ պետք է գլխանոցը վար առնել եւ յետոյ պարանոցը տանջելով հաղիւ հազ կարելի կ'ըլլայ տեսնել զանազան գունազարդ նկարները...»

Չմոռնամ ըսելու որ այս «Գմբէթ»ը, շինուած Մանուէլ ճարտարապետէն ըստ նոյն Թովմային, ունէր միայն 40 կանգուն բարձրութիւն մը, այսինքն մօտաւորապէս հինգ կամ վեց յարկանի տան մը բարձրութիւնը:

Այս օրինակը յիշեցի ցոյց տալու համար «ուզուած չափազանցութիւն»ը, որ մեր մատենագիրները, դիւրաւ կը դնէին իրենց գրութեան մէջ:

Այսպիսի չափազանցութեան մը արդիւնք պէտք է համարել, հայկական ճարտարապետութեան մէջ, «Գմբէթ»ի մասին խօսելը: Որովհետեւ՝ խնդիրը զուտ ճարտարապետական տեսակէտէն դատելով՝ պիտի տեսնենք Գմբէթի բացատրութիւնը սխալ բացատրութիւն մըն է՝ զործածուած հայ շինուածաձեւին համար:

Բայց նախ սահմանը տանք, ճարտարապետական հասկացողութեամբ Գմբէթի զաղափարին եւ ապա տեսնենք թէ մեր տաճարներուն վրայ գտնուած շինութիւնը կը համապատասխանէ՞ այս սահմանին:

ԳՄԲԵԹԸ ՏԱՆԻՔԻ ՁԵՒ ՄԸՆ Է

Շէնքի մը վրայ կարելոր մէկ մասն է տանիքը: Ոչ միայն ան կարելոր է ընթացիկ կեանքը հոն կարելի դարձնելու համար, այլ եւ ճարտարապետական յարգարժի տեսակէտէն՝ անոր կատարած դերը շատ մեծ է: Չափազանցած չենք ըլլար, եթէ ըսենք թէ՛ տանիքը ամենակարելոր մասն է շինուածքի մը: Կարելի է մի միայն տանիքով՝ չենք մը շինել առանց նոյն իսկ որմերու: Ասոր ամենապարզ օրինակն է վրանը, ուր միայն

տանիքը բաւական կ'ըլլայ բնակելի միջոց մը ստեղծելու:

Հիւսիսային երկիրներուն մէջ մասնաւորաբար, պիտի հանդիպինք չէնքերու, որոնց որմերը իրենց ամէնէն պարզ արտայայտութեանը վերածուած են, հսկայ մինչեւ դետին հասնող տանիքին պատճառաւ: Անկարելի է ուրեմն երեւակայել չէնք մը որ չունենայ տանիք: Տաք երկիրներու տափարակ տանիքով չէնքերը, դեռ ամբողջապէս չվերջացած շինութեան մը տպաւորութիւնը կը ձգեն դիտողին վրայ, որուն աչքերը ի դուր պիտի փնտռեն որմերը պսակող տանիքը:

Երբ այսպէս՝ տանիքը կարելոր մէկ մասն է չէնքի մը, ան՝ բնական է թէ՛ մասնաւոր խնամքի առարկայ կ'ըլլայ ճարտարապետէն, թէ՛ շինուածաձեւին եւ թէ՛ շինուածակերպին մէջ:

Բազմաթիւ ձեւեր կան չէնքի մը տանիքը շինելու: Անոր կազմութիւնը մասնաւորապէս ենթակայ է, չէնքին ներքին շինուածաձեւին եւ մասնաւոր գործածուած շինուածանիւթին: Մասնաւորաբար այն դարերուն ուր ձեւաւորութեան ճարտարապետական ոճերը, շինուածանիւթը խաղաց շատ կարելոր դեր մը, թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին յարդարումներուն մէջ, դնելով ոճին վրայ որոշ կնիք մը: Օրինակ՝ Եգիպտական ճարտարապետութիւնը, — որուն սրահները, քարաչէն՝ տափարակ ծածկուած էին, — կը ներկայացնէ սիւներու իրական անտառ մը: Ի փոխարէն՝ փայտաշէն տանիքով ծածկուած չէնք մը բոլորովին այլ տեսք մը պիտի ներկայացնէ շնորհիւ փայտին ընձեռած դիւրութիւններուն, որպիսին է հելլենական տաճարը:

Ուրեմն՝ տանիքին ձեւաւորումը սերտօրէն կապուած է զործածուած շինուածանիւթին եւ ներքին ճարտարապետական յարդարումին: Բնական է այս երկու կարելոր ազդակներուն վրայ կու գան ա-

ւելնալ ինչ ինչ այլ նկատումներ ալ, որպիսին են կլիմայական պահանջները, կենցաղական տուեալները եւ այլն:

Անկախաբար շինուածանիւթի պարտադրած պահանջներէն, երբ չենքին ներքին ճարտարապետութիւնը կը թոյլատրէ ունենալ միջանկեալ յենարաններ, որմեր, սիւներ եւ այլն, տանիքին շինութիւնը կը պարզուի: Մէկ որմէն միւսը, մէկ սիւնաշարէն միւսը, համեմատաբար փոքր տարածութիւնները ծածկելը, բնական է աւելի պարզ է եւ դիւրին: Բայց երբ չէնքին ներքին սարքուածքը այնպէս մըն է՝ որ մեծ սրահներ գտնուին հոն եւ կամ նոյն իսկ՝ ամբողջ չէնքը ներքսպէս ընդարձակ միջոց մը ներկայացնէ, առանց որ եւ է միջանկեալ յենարանի, այն ատեն տանիքին շինութիւնը կը դժուարանայ: Մեծ անջրպետ մը մէկ ոստումով ծածկելը կը պարտադրէ կշռական խրթին խնդիրներու լուծում մը, ուր՝ շինուածանիւթին ընձեռած կարելիութիւնները կը խաղան դրեթէ վճռական դեր մը:

Մեծ միջոցներ ծածկելու համար կը գործածեն «կամար»ը, որ կշռական տեսակէտով կը ներկայացնէ պարզ շինութիւն մը, մասնաւոր երբ ան ուղիղ կիսաբոլորակ կամար մըն է (pleine cintre): Այս ձեւի ծածկոցներ լայնօրէն գործածուած են Հայաստանի մէջ: Մեր բոլոր տաճարները ծածկուած են կամարակապ քարաչէն տանիքով մը: Այս տանիքի ձեւը մասնաւորաբար կը յարմարի, երկարած ուղղանկիւն քառանկիւն շինութիւններու, որոնց վրայ ան կը ձեւացնէ որոցաձեւ կամարը (voûte en berceau): Այս ձեւ շինուածքի առաջին օրինակը կը տեսնուի արեւելեան պաղիլիֆին, այսինքն հայկական շինութիւններուն վրայ, նախ քան Ռօման շինութիւնները:


Խնդիրը սակայն կը կնճռոտի՝ երբ ծածկուելիք տարածութիւնը քառակուսի մըն է: Այն ատեն պէտք կ'ըլլայ շինել

կամար մը որ փոխանակ երկարաձեւ ըլլալու, շրջադիկ կ'ըլլայ: Ահա՛ այս տեսակ կամարը կը կոչեն Գմբէթ (coupole, kupel).


Ուրեմն՝ Գմբէթը տանիքի ձեւ մըն է, որ կը ծածկէ ընդարձակ տարածութեան վրայ, մէկ ոստումով, չէնքը՝ անոր չորս որմերէն մեկնելով եւ առանց միջանկեալ յենարանի:

Գմբէթին յատկանիշը, որպէս տանիք, այնքան ակներեւ է որ կարելի է զայն չիթիլ իրեն նմանող ուրիշ շինութիւններու հետ: Եւ որովհետեւ տանիքը շինուածքի մը ճարտարապետական գլխաւոր յատկանիշն է, այդ իսկ պատճառով գրեթէ կը ստանայ ճարտարապետական բէթը կը կարելութիւն մը եւ կու տայ չէնքին կարելորութիւնը մը:

Գմբէթի յատկանշական օրինակներ կը տեսնենք Հռոմի Բանթէօնին, Ս. Պետրոսի, Բիւզանդիոնի Ս. Սոփիային, Երուսաղէմի Օմարի մզկիթին վրայ: Այս



1. - Որոցաձեւ կամարի պատկերը մերսէմ դիտուած.



2. - Գմբեթի օրինակ մը.

չէնքերուն վրայ դրուած գմբեթը՝ որպէս տանիք՝ կը ծածկէ շինուածքին մեծագոյն մասը, եթէ ոչ ամբողջութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՆԻՔԻ ՇԻՆՈՒԱԾԱԾԵՐԸ.

Հայկական տանիքին շինուածածելը քննելու համար օգտակար է ակնարկ մը նետել գիւղական շինութիւններուն վրայ: Ասոնց կերտուողումը աւելի սերտօրէն կապուած ըլլալով տոհմային կենցաղին հետ, մեզ պիտի տան նախնական տուեալները հայկական տանիքի ոճին:

Մերոյ Մագիստրոս Արքեպ. Տէր-Մովսէսեան կու տայ հայ գիւղական տան տանիքին սարքաւորումին ընդարձակ մէկ նկարագրութիւնը (*):

«... ընդհանրապէս տան տանիքը ըստացուած է, չորս սիւների գործածու-

թեան հանգամանքում եւ առ հասարակ կողմնակի գերաններն այնպէս են միմեանց վրայ շարուած, որ ներքուստ ըստացուած է մի տեսակ խաչածեւ աստիճանաբար բարձրացող կամարածածկ, որ գնալով նեղանում է ուղիղ կենդրոնում: Այդ կեդրոնում տանն կրակարանն է շինուած, գետնի մակերեւոյթից թեթեւ խորութեամբ...:

«Կրակարանի գլխին, կտրից բացուած է տունը լուսաւորող եւ կրակարանի ծուխը դուրս թողնող կտր բացուածք մը որ հերթ, հերթիկ անուն է կրում: Եթէ կը տուրը միանգամայն տախակ է, այդ հերթիկը դրսից չըջապատուած են գլանածեւ թարմ ճպտաներից հիւսուած մի դամբիւղով, որ աւելի ամուր եւ հաստատուն դարձնելու համար, երկու տեղից, բարձրութեան վրայ, ոլորած հաստ պարանի նմանութեամբ դօտենման հիւսուածքներ են դործում: Այդ դամբիւղները ներսից եւ դրսից ձեւում են հասարակ յարդախառն ցեխի չաղախով»:

Այսպէս ուրեմն գիւղական հայ տունը կը գործածէ՝ բոլորովին նախնական ձեւի մը մէջ, լուսամուտ մը որ է նաեւ ծխնելոյց մը: Բնական է ոճի մը զարդացումին տուեալները պիտի չփնտռենք մի միայն գեղջկական շինուածքի մը վրայ, թէեւ ան տայ հետաքրքրական նախատիպ մը:

Սակայն այս «լուսամուտ-ծխնելոյց»ը կը գտնենք հայ քաղքենիին բնակարանին վրայ ալ, ինչ որ ոճին կազմաւորութեան տեսակէտէն կարեւոր իրողութիւն մըն է: Բնական է, ան աւելի ձեւաւորուած է հոն եւ ճարտարապետական զարգացում մը կրած է: Սակայն անոր կատարելագործուած ձեւը կը գտնենք, որպէս «լուսամուտ» հայ իշխանական պալատին՝ տաճարին վրայ:

Հայ բնակարանը շատ չափը չէ պատուհանի շինութեան մէջ: Գիւղական

տունէն մինչեւ իշխանական պալատին տաճարը, չէնքին որմերուն վրայ հաղուադիւտօրէն կը հանդիպինք պատուհաններու: Ասիկա կենցաղական պայմաններու հետեւանք է եւ ոչ թէ Հայաստանի լոյսին զօրութեանը, ինչպէս կը կարծեն օտար գիտուններէն ոմանք:

Հայ բնակարաններու մէջ, օդը եւ լոյսը տանիքէն կը ստացուին, հոն գետեղուած բոլորակ եւ կամ բազմակիւնի շինուածքի մը միջոցաւ: Այս շինութիւնը ինքնին զարգացած մէկ ձեւն է գեղջկական լուսամուտ-ծխնելոյցին:

Ահա այս շինուածքն է որ, շինուածանիւթին ընձեռած կարելիութիւններու սահմանին մէջ, մեծցաւ, ընդարձակուեցաւ եւ իր գերագոյն չափերուն հասաւ երբ գետեղուեցաւ իշխանական տաճարին վրայ եւ անկից ալ անցաւ քրիստոնէական եկեղեցիին վրայ, որպէս «Կաթողիկէ»:

Ըլլա՛յ իշխանական տաճարին վրայ, ըլլա՛յ քրիստոնէական եկեղեցիին վրայ այս շինութիւնը մնաց միշտ «լուսամուտ» մը, թէեւ չափէն աւելի ընդարձակուած: Բայց երբեք ան չեղաւ տանիք մը, ապա ուրեմն՝ Գմբեթ մը, որ կը ծածկէ չէնքը ամբողջութեամբ եւ կամ դոնէ մեծ մասով:

Մեր աշխարհիկ թէ կրօնական տաճարները ծածկուեցան միշտ ուղիղ կիսաբոլորակ (pleine cintre) կամարակապ՝ քարաչէն տանիքով մը, որուն մէջէն դուրս կը ժայթքի «լուսամուտ»ը, «կաթողիկէ»ն:


Հայկական շինուածանիւթովը՝ քարը, եւ շինուածածելովը՝ անկաղապար, կարելի չէր այս լուսամուտը այնքան զարգացնել որ կարենար ամբողջ չէնքը ծածկել ինքնիրեն, նման Ս. Սովիաթի դըմբէթին:

Շինուածանիւթին ընձեռած կարելիութիւններուն սահման մը կայ, որ ամենակարող ճարտարապետն իսկ չէ կարող ան-

տեսել: Ասոր համար է որ Ս. Սովիաթի գմբեթը վերաշինող Տրդատ ճարտարապետը, որ գիտեր թէ գմբեթ մը ինչպէս կը շինեն, երբ Հայաստան եկաւ, չփորձեց հայ շինուածանիւթով նման գմբեթ մը շինելու: Եւ Հաղբատի ժամատան վրայ, ուր սակայն իրապէս պէտքը կար գմբեթ մը շինելու, ստիպուած եղաւ հընարելու «Ջիլ»երու ճարտար դրութիւնը, ժամատունը ամբողջութեամբ կարենալ ծածկելու համար: Եւ ինչ որ զարմանալի է, Տրդատ՝ գետեղեց, Ջիլերու խուրճին է, Տրդատ՝ գետեղեց, Ջիլերու խուրճին է, որ կը վրայ լուսամուտ Կաթողիկէն: Ինչ որ կը նշանակէ թէ այս շինուածքը (կաթողիկէն), ճարտարապետին մտքին մէջ կը մնար որպէս լուսամուտ եւ ոչ թէ որպէս գմբեթ, ինչպէս կը շփոթէ մատենագիրը: Բայց, ի՞նչպէս հայ ճարտարապետը կը շինէր Կաթողիկէն:


Եթէ քննենք այս շինուածածելը, գիւրաւ պիտի հասկնանք թէ ինչո՞ւ Կաթողիկէն չի կրնար զարգանալ այնքան որ վերածուի գմբեթի:

Հակառակ դարերու ընթացքին, մասնաւորաբար է դարէն ասդին ձեռք բեր-



3. - Հայկական տան տանիքի օրինակ.

(*) Մ. Մագիստրոս Արքեպ. Տէր-Մովսէսեան. «Հայկական երեք մեծ վանքեր». էջ 129, Երուսաղէմ 1938.



5. - Ապուղամբեանց Ս. Գրիգոր եկեղեցին.

Կէ՛հ, Ապուղամբեանց, Գաղկաշէն եկեղեցիները, ճարտարապետը շինուածքը բաժնելով յարկերու՝ կը յաջողի բրգաձեւ շինութիւն մը յառաջ բերել, որուն դա-

վաթին գետեղելով փոքրաշէն Կաթողիկէն, անոր կու տայ դմբէթի պատրանք մը, այն տպաւորութիւնը յառաջ բերելով թէ այդ փոքրաշէն Կաթողիկէն կը ծած-

կէ ամբողջ շինութիւնը: Մինչդեռ՝ իրա-կանին մէջ իւրաքանչիւր յարկին մասնա-կի տանիքներ կու դան նուազեցնել լուսամուտին ծածկելիք տարածութիւնը:

Կան ալ շինութիւններ, ուր լուսամուտ-կաթողիկէն կորսնցուցած է իր իսկական կոչումը, ան ոչ գմբէթի տեղ կը բռնէ, ոչ ալ լուսամուտի, այլ նկատուած է որպէս յատկանշական շինուածք մը ճարտարապետական ոճին եւ առ այդ գետեղուած է չէնքին վրայ: Մասնաւորաբար այս պարագան կը ներկայացնէր Անիի պարիսպներէն դուրսի՝ Հովա եկեղեցին:

Արդէն տեսանք թէ Հաղբատի Ժամատունը որ ջլաւոր տանիքով մը ծածկուած ըլլալուն ալ պէտք էր ունենար գմբէթի, նորէն իր ջիւերուն դաւաթին կը դնէ լուսամուտ-կաթողիկէն: Բացայայտ է որ 'հոս' ճարտարապետը դայն է գետեղած

որպէս գմբէթ, այլ որպէս լուսամուտ եւ ոճին յատկանշիչ:

Բայց իրապէս լուսամուտի ըմբռնումով գործածուած Կաթողիկէի օրինակ մը կը տեսնենք Սաղմոսավանքի վրայ, ուր կառուցուած թմբուկը, առանց որմի, կազմուած է սիւներու շարքով մը, ինչ որ կը դիւրացնէ օդի եւ լոյսի մուտքը չէնքն ներս:

Հայ չէնքը բաղդատաբար օտար նման-օրինակ շինութիւններու, փոքր կերպը-ւածք մը ունի եւ թերեւս ասոր համար է որ ան համաչափութեան գլուխ գործոց մը եղած է: Նման չէնքի մը վրայ գետեղուած լուսամուտ-կաթողիկէն բաւական է ներքին լուսաւորումին: Բայց պարական նոյնը չեղաւ օտար ոճերու մէջ ուր հայկական լուսամուտ-կաթողիկէն մուտք դտաւ:

(Նարեկեանի) ՃԱՐՏ. Ս. ՃԵՎԱԶԻՐԵԱՆ

Ծ Ա Ր Ա Ի

Ծարաւն եմ ես քեզի՛ք բրիտոմ ջինջ աղբիւրին.
Բայց ուր է ան՝ որ Ժայռերուն ծոցէն կու գայ.
Կը լըսեմ ձայնն ու չեմ գտներ ես անիկա.
Այդեօք սառած աղամանդ է ձըմեռնային...

Կը լըսեմ ձայնն յիշողութեանըս ընդ մէջէն
Մանուկ տրդուն որ երաժիշտ էր Ժպտագին
Սուրբ Նըշանի վանքն՝ ամառուան եղանակին.
Ու զանգակներն անոր կարծես գեռ կը հնչեն...

Վեհ կերպարանք մը կը հսկէր ճամբաներուն՝
Որոնց վըրայ առտըւան լոյսը կը ցաթէր,
Երբ կը բացուէր կապոյտ գիշերն՝ աստեղատուն.

Ամէն քարէ կը հսկէր ջուրը մարգարիտ.
Ահ, այդեօք չեմ ամբողջ սափորը լեցուցեր,
Որ գեռ հոգիս անհուն ծարաւն է աղբիւրիդ...

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ